ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

04-ը սեպտեմբերի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Փրկարարի օրվա առիթով

Սեպտեմբերի 4-ին Հայաստանում նշվում է Փրկարարի օրը. սա լավագույն առիթն է գնահատելու փրկարարների անվերապահ ծառայությունը, անձնվեր ու հանրօգուտ աշխատանքը:

Մասնագիտական օրվա առիթով ջերմորեն շնորհավորում եմ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության բոլոր աշխատակիցներին: Պատերազմական և արտակարգ իրավիճակներում, աղետների ժամանակ հայ փրկարարները բազմիցս իրագործել են անհնարին թվացող սխրանքներ, փրկել կյանքեր՝ հաճախ վտանգելով իրենցը:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել և շնորհակալություն հայտնել Կոտայքի մարզային փրկարարական վարչությանը, Աբովյանի հրշեջ-փրկարարական ջոկատին համայնքում ստեղծված արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու և մասնագիտական պատշաճ գործունեություն իրականացնելու համար:

Փրկարար ծառայության հարգելի՛ աշխատակիցներ.

Մասնագիտության բերումով դուք հաճախ վտանգավոր իրավիճակների ու պատահարների կենտրոնում եք, ուստի առաջնահերթ մաղթում եմ ձեզ անփորձանք ծառայություն, հաջողություններ պատասխանատու աշխատանքում և ամենայն բարիք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ